

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 8

1967

ԱՐՄԵՆ ԱՆԱՍՏԱՆ

ԹՈՎՄԱՍ ԿԻԼԻԿԵՑՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական գիտությունը հին Հայաստանում բազականին զարգացած է եղել: Դրա փայլուն վկայություններից մեկն է Հանրածանոթ այն «Աշխարհացոյցը», որը մի ժամանակ վերագրվում էր Մովսես Խորենացուն, ապա Անանիա Շիրակացուն, իսկ այժմ էլ Համարվում է VII դարի սկզբի մի անառուն հեղինակի գործ: «Աշխարհացոյցը» համաշխարհային ընդգրկում ունի և ներկայացնում է Եվրոպայի, Արքայի (Աֆրիկայի) և Ասիայի աշխարհագրությունը: Այն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում զանազան երկրների պատմական, ֆիզիկական ու տնտեսական պայմանների մասին:

Ինչպես հայտնի է, «Աշխարհացոյցը» ժամանակի ընթացքում փոփոխությունների ու վերամշակումների է ենթարկվել, որի հետևանքով և առաջացել են նրա ընդարձակ և համառոտ խմբագրությունները:

Սույն հաղորդումով մենք նպատակ ունենք ուշադրություն հրավիրել աշխարհագրական մի փոքր աշխատության վրա, որը կազ ունի «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության հետ:

Դա թովմաս Կիլիկեցու «Տեսակք աշխարհաց և համանգամանք երկրի» վերնագրով աշխատությունն է, որը բաղկացած է երեք հիմնական մասերից՝ Ասիա, Մեծ Հայք և Կիլիկիա: Առաջին երկու մասերում հեղինակը տալիս է Ասիայի երկրների և պատմական Հայաստանի աշխարհագրությունը, իսկ երրորդ գլուխը ամրողապես նվիրված է Կիլիկիային:

Այդ գործի մասին առաջին անգամ տեղեկություններ է տվել Պ. Ինձիճանը իր «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի» աշխատության մեջ, պարզելով նրա հեղինակի անունը՝ թովմաս Կիլիկեցի, և բնութագրելով գործը: Նա հիշատակում է, որ այդ բնագրի առաջին երկու մասերը բաղկած են «Աշխարհացոյցից», իսկ Կիլիկիային նվիրված մասը ինքնուրույն է: Հենց վելով ձեռագրի վերջում եղած «Թումայ Բարունի» անվան հիշատակության վրա, նա եղբակացնում է: «Այս բան յայտնի ցուցանէ զթովմաս լինել ի Կիլիկիոյ լոյր սակս և առաւել բան զայլոց աշխարհաց՝ զիւրոյ հայրենեացն լիշեաց զրերս»<sup>1</sup>:

Հետադայում այս ձեռագրին անդրադարձել է նաև Պ. Ալիշանը՝ իր «Սիսուան» աշխատության մեջ: Նա ևս նշում է, որ տվյալ գործի հեղինակը՝ թովմա Բարունի Կիլիկեցին է: Ալիշանը միաժամանակ որոշում է նաև հեղինակի ապրած ժամանակը՝ XIV դար<sup>2</sup>:

1 Պ. Ինձիճան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, Հայտ, 4, Վճռետիկ, 1855, էջ 315:

2 Պ. Ալիշան, Սիսուան, Վճռետիկ, 1855, էջ 9:

Մեր մատենագրությունը չի պահպանել Թովմաս Կիլիկեցու վերաբերյալ կենսագրական տեղեկություններ: Մկրտիչ Աղավնունին իր աշխատություններից մեկում տալիս է մի քանի տեղեկություններ ոմն Թովմաս արեղա Հռոմելայեցու մասին՝ նույնացնելով նրան մեր Հեղինակի հետ: Ըստ նրա՝ 1292 թվին, Հռոմելայի անկումից հետո, Թովմաս արեղան Հռոմելայից գալիս է Կիլիկիա: Թովմաս արեղա Հռոմելայեցին եղել է զրիշը «Գիրք թղթոցի», որ նա ընդօրինակել է Կիլիկիայում 1298 թվականին<sup>3</sup>: Մ. Աղավնունու հիշտատակած՝ ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի առաջարանում և «Գիրք թղթոց»-ի հիշտակարանում շպանք որևէ լրացուցիչ տեղեկություն, որը հիմք տար մեզ նույնացնելու վերահիշյալ անձնավորությանը մեր աշխարհագրի հետ: Այնպես որ, միայն ենթադրաբար կարող ենք ասել, թե Թովմաս արեղա Հռոմելայեցին տվյալ աշխատության Հեղինակ Թովմաս Կիլիկեցին է:

Թովմաս Կիլիկեցուն անցողակի կերպով հիշել են Նորայր Բյուզանդացին<sup>4</sup> և Հ. Աճառյանը<sup>5</sup>: Թե՛ Ինձինյանը, թե՛ Ալիշանը և թե՛ մյուսները Թովմաս Կիլիկեցու մասին խոսելիս նկատի են ունեցել Վենետիկի Մխիթարյան մատենագրանում գտնվող ձեռագիրը, որի վերաբերյալ, սակայն, նրանք տեղեկություններ չեն տալիս: Ըստ Հ. Աճառյանի՝ վենետիկյան ձեռագրի համարը 632 է, բայց դա հավանաբար սխալ է: Վենետիկյան ձեռագրերի այն ցուցակում, որ հրատարակել է Բ. Սարգիսյանը, Թովմաս Կիլիկեցու այդ ընագիրը գտնվում է «Ուկեփորիկ Դ» ձեռագրում, որը կրում է 243 (Հին՝ 947) համարը<sup>6</sup>: Թովմաս Կիլիկեցու գործը մինչև օրս օգտագործվել է միայն քաղվածաբար, իսկ բուն ընագիրը մնացել է անտիպ:

Մաշտոցյան մատենագրանի ձեռագիր ֆոնդերում պահպանվող աշխարհագրական նյութերի մատենագիտությունը կազմելու մեր աշխատանքի ընթացքում պարզվեց, որ այդ երկից երկու օրինակ էլ գտնվում է մեզ մոտ (ձեռ. № 1518, 163ա—165ա, № 1770, 87բ—90բ):

Մեր այս օրինակներից առաջինում ընագիրը կրում է «Տեսակք աշխարհաց և համանգամանք երկրի» խորագիրը, իսկ երկրորդում՝ վերնագիրը մի փոքր աղավաղված է: Առաջին ընագիրը ընդօրինակված է 1594, իսկ մյուսը՝ 1589 թվականին: Ներկա օրինակներում շկան նշումներ հեղինակի մասին: Համեմատելով այս երկու օրինակների ընագիրն իրար, ինչպես նաև ինձինյանի և Ալիշանի կատարած մեջբերումների հետ, տեսնում ենք, որ դրանք համընկնում են վենետիկյան օրինակին: Համեմատությունները ցույց են տալիս, որ Թովմաս Կիլիկեցին, քաղելով «Աշխարհացոյց»-ից իր աշխատության առաջին երկու մասերը (Ասիա և Մեծ Հայք), երբեմն բաց է թողել տեղանուններ, կատարել է որոշ կրծատումներ, իսկ երբեմն էլ՝ ավելացումներ: Մեծ մասամբ անունները այստեղ երեան են գալիս աղավաղված ձեերով:

Պարզելու համար այն հարցը, թե արդյոք Թովմաս Կիլիկեցու մոտ եղած տեղանունների տարբերությունները սոսկ աղավաղումներ են հանդիսանում,

<sup>3</sup> Մ կ ր տ ի չ ե պ. Աղավնունի, Միարանք և ալցելուք հայ երուսաղեմի, երուսաղեմ, 1929, էջ 156—157:

<sup>4</sup> Նորայր Բյուզանդացի անդացի, Հայկական բառաքանութիւն, Կ. Պոլիս, 1880, էջ 108:

<sup>5</sup> Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Հատ. Բ, Երևան, 1944, էջ 322:

<sup>6</sup> Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենագրանին Մխիթարեանց ի Վենետիկ, Հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 632:

թե դրանք թովմաս Կիլիկեցու ժամանակ օգտագործված ձևեր են, մենք նախ և առաջ ստուգումներ կատարեցինք Մեծ Հայոց նկարագրությանը վերաբերող մասում՝ Հ. Հյուրշմանի «Հին Հայոց տեղույթ անունները» ուսումնասիրության օգնությամբ։ Այս աշխատության մեջ Հյուրշմանը VII դարի «Աշխարհացոյց»-ում առկա պատմական Հայաստանի տեղանունների մասին խոսելիս, միաժամանակ նշում է նաև ժամանակի ընթացքում նրանց կրած ձևափոխումները, եթե այդպիսիներ եղել են։

Արզունը (կամ Արզինը), որ կա թովմաս Կիլիկեցու մոտ, Հյուրշմանի տրված տեղեկության համաձայն՝ Աղձնյաց նահանգի Արգն կամ Արծն կոչված գավառի ասորական ձևն է<sup>7</sup>: Վերջինս XII—XIII դարերում գործածել են Մատթեոս Ռուհայեցին<sup>8</sup>, Միք. Ասորին<sup>9</sup> և Ասողիկը<sup>10</sup> (վերջինիս մոտ Ազրուն ձևով է): Փաստորեն թովմաս Կիլիկեցին այսուհետ օգտագործել է հենց իրեն ժամանակակից մի ձև։ Սակայն ժամանակակից ձևի օգտագործման այս օրինակը համարյա միակն է։ Կան մի քանի ուրիշ անվանաձևեր, որոնց գործածությունը թեև թովմաս Կիլիկեցուց որոշ ժամանակով առաջ ապրած մատենագիրների մոտ է պատահում, բայց և միաժամանակ «Աշխարհացոյց»-ի ժամանակից շատ ուշ են հանդես գալիս։ Օրինակ՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տարրերակների մեջ Վասպուրականի նահանգի Աղովիտ և Բոտիղովիտ անունները իրար են համապատասխանում։ Թովմաս Կիլիկեցու մոտ այդ անունների գիմաց հանդես է դալիս Բառողովիտ (տարր. Բառովողիտ) ձևը, որն ակնհայտորեն կապ ունի Բոտիղովիտ ձևի հետ։ Թովմաս Կիլիկեցու մոտ եղած Բառողովիտը հիշատակվում է նաև IX դարի հեղինակ թովմա Արծրունու մոտ՝ Բառիլովիտ ձևով<sup>11</sup>։ Այս անվան համար Հյուրշմանը տեղ շի գտել տեղադրելու, ասելով, որ «Աշխարհացոյց»-ում չկա<sup>12</sup>։ Այնինչ՝ մեր կատարած ճշտումով այն պետք է մտներ Աղովիտի նկարագրության մեջ։ Այսպիսի օրինակներից է նաև թովմաս Կիլիկեցու օգտագործած Առնիուն անվանաձևը, որը համապատասխանում է «Աշխարհացոյց»-ում պատահող Առնյուն ձևին (Վասպուրականի նահանգ)։ Առնիուն ձևը մի անգամ գտնում ենք նաև թովմա Արծրունու մոտ, որը հավասարապես օգտագործել է նաև Ոտն Առնոյ ձևը։ Ըստ Երևութին Առնիուն ձևը աղավաղում չէ, այլ ինչպես մտածում է Հյուրշմանը, ներկայացնում է սեռական հոլովի տարրեր ձևը (Առնոյ-ոտն և Առնի-ոտն)<sup>13</sup>։

«Աշխարհացոյց»-ից շեղվող այսպիսի օրինակներն էլ կարելի է համարել հետագա ժամանակների ձևափոխումներ, որոնք հասած կարող են լինել մինչև թովմաս Կիլիկեցու ժամանակները։ Մենք համեմատության առանք Սյունյաց նահանգի գավառների այն ցուցակը, որը գտնվում է թովմաս Կիլիկեցուն ժամանակակից հեղինակ՝ Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ<sup>14</sup>։ Այստեղից պարզվեց, որ Սյունյաց նահանգի գա-

7 Հ. Հյուրշման, Հին Հայոց տեղույթ անունները, Վիեննա, 1907, էջ 168.

8 Մատթեոս Առունեցացի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1869, էջ 70.

9 Միխայլ Առունեցաց պատրիարքի ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 255.

10 Առ. Ասողիկ, Պատմութիւն, Պետերբուրգ, 1885, էջ 195.

11 Թօվմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեց, Պետերբուրգ, 1887, էջ 251.

12 Հյուրշման, Նշվ. աշխատ., էջ 214.

13 Հմմատ, Հյուրշման, էջ 216.

14 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեայ Ստեփաննոսի Օրբելյան արքային կոպոսի Սիսական, Քիֆիս, 1911, էջ 509—523.

վառների անունները «Աշխարհացոյց»-ի ժամանակից մինչև Թովմաս Կիլիկեցու ժամանակը ոչ մի փոփոխություն չեն կրել: Հետևաբար Թովմաս Կիլիկեցու մոտ եղած վերոհիշյալ նահանգի գավառների անունների ձևերը ոչ թե փոփոխված ժամանակակից անվանաձևեր են, այլ աղավաղված ձևեր:

Մենք, միաժամանակ, ներկայացող փառական մի ու մի ստուգեցինք Դ. Ալիշանի «Տեղագիր Հայոց մեծաց»<sup>15</sup> և Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ Աշխարհացոյց-ի»<sup>16</sup> աշխատությունների օգնությամբ:

Այս բոլորից հետո կարելի է հանգել այն եղբակացության, որ, հակառակ ժամանակակից որոշ ձևերի առկայությանը, Թովմաս Կիլիկեցու մոտ շատ են նաև աղավաղված ձևերը: Գաղափար տալու համար եղած աղավաղումների մասին, մինք Կհիշինք մի քանի ակնառու օրինակներ՝ փակազծում նշելով ուղիղ ձևերը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի: Օրինակ՝ Կապրաս (Կապուտան), Աղիծ (Առիւ), Ազուր (Մզուր), Արշակոնիդ (Արճիշակոնիստ) և այլն: Կան նաև անունների համառոտված ձևեր՝ Ռայխանք՝ Ա օրինակում կամ Ապիանք՝ Բ օրինակում՝ (Պիանք), Ռեմզան (Ռոմզապերոժ), Սպանտարան (Սպանգարանպերոժ) և այլն: Այս են Մեծ Հայքի տեղանուններին վերաբերող մեր կատարած ստուգումների արդյունքները:

Սակայն եթե հեղինակը Ասիացի և Մեծ Հայքի աշխարհագրության գլուխները վերցրել է VII դարի անանուն «Աշխարհացոյց»-ից, ապա Կիլիկիայի վերաբերյալ մասը, ինչպես նշեցինք, ինքուրուցն է: Այս մասը, որքան էլ համառոտ, մեծ արժեք է ներկայացնում Կիլիկիայի աշխարհագրության համար: Նա հետաքրքր տեղեկություններ է տալիս Կիլիկիայի բնուկան հարստությունների, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի մասին: Դ. Ալիշանը բարձրը է գնահատում Հիշյալ բնագրի՝ Կիլիկիային վերաբերող մասը: Այս փոքրիկ բնագրի հարուստ տեղեկությունները նա որոշ շափով օգտագործել է իր «Միսուան» աշխատության մեջ, տալով մի շարք անծանոթ կամ կասկածելի բաների բացատրությունները<sup>17</sup>:

Ալիշանը Թովմաս Կիլիկեցու բնագրի նկարագրությունը չի տալիս, բայց մի քանի առիթներով նշում է, որ իր ձեռքի տակ եղած օրինակը ունեցել է աղավաղումներ: Որոշ բույսերի և կենդանիների անունները քննելու ժամանակ նա կանգնում է զժվարությունների տուազ, գտնելով, որ դրանք աղավաղված են: Օրինակ՝ մի առիթով նա ասում է, որ իր ձեռքի տակ եղած ոյզ բնագիրը «ոչ թուի ստուգագիր յամենայնի»<sup>18</sup>: Մի ուրիշ կապակցությամբ նա կասկած է հայտնում, թե «ստոյդ իսկ իցէ գրուածն»<sup>19</sup>: Որոշ աղավաղումներ կան նաև մեր օրինակներում:

Մենք հարկ ենք համարում ներկայացնել Թովմաս Կիլիկեցու աշխատությունը ամբողջությամբ, Մաշտոցյան Մատենադարանի վերոհիշյալ № 1518 (Ա օրինակ) և № 1770 (Բ օրինակ) ձեռագրերի համեմատությամբ:

15 Դ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855:

16 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացոյցի, Երևան, 1962:

17 Դ. Ալիշան, նշվ. աշխատ., էջ 9, 13, 14, 17, 30—32:

18 Նույն տեղում, էջ 30:

19 Նույն տեղում, էջ 31:

## ՏԵՍԱԿՔ ԱՇԽԱՐՀԱՅ ԵՒ ՀԱՄԱՆԳԱԼՄԱՔ ԵՐԿՐԻ

Ասորիք<sup>1</sup> յերի կայ իւրում ծովուն հիւսիոյ ի Հրէաստանի: Ունի ինքան և լերինք անուանիք՝ զիկրանան, զԿարմեղոս<sup>2</sup>, և գետ հզօր զՅորդանան, և քաղաք բաղումս և մայրաքաղաք զԱնտիոք և զԴամասկոս: Ունի և դրունս Բ և վայրս ընդարձակս:

Հրէաստան ելից կայ Փիւնայզան<sup>3</sup> Պիղագոսին<sup>4</sup> մինչև ի սահմանս Եղիպտոսին, և ապառաժն Արարիա՝ Ասորովք: Եւ ունի աշխարհս Գ՝ զԳալիլիա, զՄամարիա և զԵղոմիա. Եւ լիճս Բ՝ զՏիրերիա<sup>5</sup> և զՄեռեալ ծովն: Եւ գետ Յորդանան անցանէ ընդ նայ: Ունի և քաղաք բաղումս և զմայրաքաղաքն Երուսաղէմ: Եւ է Հրէաստան քաղցրաբեր և պաղալից, որ բղխէ<sup>6</sup> զկաթն և զմեղըն:

Ապառաժն Արարիա յերի կալով Եղիպտոսի և յարևմտից Ճիւղիլայ և Կարմիր ծովուն, որ էանց հսրայէլ, յերի կալով Ասորոց և Հրէաստանի: Արարիա փոքր ունի աշխարհս Գ՝ զՏաճկաստան, զՓոանդիա, զՄարա՛, զոր տուն Արքամու կոչեն, գետ և ոչ մի:

Միջագետք յելից կայ Հայոց առ Եփրատ գետով և ի մտից Ասորեստանին առ Դկլաթ գետով և յերի Մեծ Հայոց<sup>7</sup>: Ունի լեառն Բ և գետս Բ՝ զԴկլաթ և զԵփրատէս, և քաղաք բաղումս յորոց<sup>8</sup> մինն<sup>10</sup> է յՄեռհայ, յորում է պատկերն փրկչական:

Բարելացիք յերի կալով Միջագետաց առ Դկլաթաւ<sup>11</sup> մինչև ցՊարսկային ծովն, և ունի աշխարհս Գ՝ զԱկո... անցանէ<sup>12</sup> ընդ նա գետն Եփրատ<sup>13</sup> և Դկլաթ<sup>14</sup>: Ունի և այլ ազգս և քաղաքս: Եւ գտանի ի սահմանս նորա ակն սարդիոն: Եւ Բարայ է ամենալի վաճառոք և ելք նաւոց<sup>15</sup> ի նա ի Հնդկաց, որ է կողմ արևելից:

Անապատն Արարիա յերի կայ Միջագետաց ի մտից<sup>16</sup> կուստնի և ունի ազգս Բ, բայց լեառն և ոչ մի:

Երջանիկն Արարիա յերի կայ Ապառաժին Արարիայ և մտանէ ընդ մէջ խորշից Կարմիր ծովուն, որպէս ցամաքամուս կղզի: Ունի ազգս բաղումս և քաղաք Ս և լերինս Ժ և գետս Դ և աղբիւրս Ա և կղզիս բաղումս և աշխարհս ամենաբարի, է որ յիւրմէ, է որ ի վաճառէ եկելոց ի Ճենաց և ի Հնդկաց: Գտանի անդ ոսկի և ակունս<sup>17</sup> պատուականս, եղս անոյշս, փայտ[ս] անփուտս և անտի էր և տունն Սարայ: Եւ բնակիչը աշխարհին ոմանք քաջ սեաւք, ոմանք կիսով, ոմանք սպիտակիք և զործին ի նմա եւղը<sup>18</sup> անոյշը<sup>19</sup> Ժ ցեղ:

Կապողք<sup>20</sup> յելից կայ Հայոց և երի կայ Կասրից<sup>21</sup> ծովուն: Ունի աշխարհս կայսոսիկ, զԱստրատական<sup>22</sup>, զՄէլ, զԳեղիան<sup>23</sup>, զՄուկան<sup>24</sup>, զԴէմու, զԱհմատանս<sup>25</sup>, զԴումրան, զՏապրաստան, զԱմր<sup>26</sup>, զԱւրան: Ունի լերինս և գետս և զծովն որ կոչի Կապրաստ<sup>27</sup>. ունի և քաղաք բաղումս յորոց մինն կոչի Գանձակ Շահաստանի:

Արուաստան, որ է Ասորեստան, այսինքն՝ Մծրին, յելից կայ Միջագետաց, առ եղերք Հայոց: Ունի լերինս և գետս և քաղաք զԵնինուէ:

<sup>1</sup> Ե այսոքիկ <sup>2</sup> Ե զկարմեղս <sup>3</sup> Ա Փիլական <sup>4</sup> Ա Պիլաքոս <sup>5</sup> Ա Տիրերեա <sup>6</sup> Ե բաշխէ <sup>7</sup> Ա Մուքիա <sup>8</sup> Ե շիք և ի մտից Ասորեստանին առ Դկլաթ զետով և յերի մեծ Հայոց <sup>9</sup> Ա յոր <sup>10</sup> Ա հինն է <sup>11</sup> Ա Դկլաթեաւ <sup>12</sup> Ա անէ <sup>13</sup> Ե Եփրատէս <sup>14</sup> Ա թկլաղ <sup>15</sup> Ա նավուց <sup>16</sup> Ա յուաց <sup>17</sup> Ա ականս <sup>18</sup> Ա մեղք <sup>19</sup> Ե անոյշ <sup>20</sup> Ա Տապողք <sup>21</sup> Ե Կազրից <sup>22</sup> Ա զԱսորպատակ <sup>23</sup> Ա զկիլան <sup>24</sup> Ա զԱմուկան <sup>25</sup> Ա զԱհմատան <sup>26</sup> Ե զԱմր

Ելիմացիք, որ կոչին Խորասան, յելից կալով Դկլաթայ<sup>28</sup> և ի կից Պարսկաց: Եւ ունի Ելիմայ աշխարհս փոքրունս՝ զիուժաստան, զՄաղմս<sup>29</sup>, Ապաստան, զՄեհրանքատակ, զԴուրմական<sup>30</sup>: Ունի և գետս Գ և քաղաքս, յորոց մինն է Գուրսեփուր. յորում զաղնիւ շաքարն գործեն. ունի և կղզիս Բ ի Պարսկային ծովուն:

Պարսք են որ կոչեն Քուսմանդիճ, յելից կայ Խուժաստանի և յերի Մարաշ-Անի աշխարհս՝ զՊարսս, զԱսպահան, զՀակար, զՊանարտաշիք, զԿրման, զՏովրան, զՄանզրան, զՄնդ<sup>31</sup>, զՍպետ<sup>32</sup>, զՎեշտ, զՍագաստան, զԱպաստան<sup>33</sup>, զԳեր, զՄլհամիկ, զՄազօն<sup>34</sup>: Ունի գետս և կղզիս և քաղաքս բազումս, յորոց մինն է Շիրիմարան քաղաք, յորում ազնիւ մարգարիտն ելանէ և այլ զաւհարք<sup>35</sup>: Եւ գաւհար<sup>36</sup> մարգարիտն այս է. զրագն Զ զանգեանն արժէ ԽԶ զրամ, զամեայն այս է և մելայն, Գ զանգեանն, Տ պարզմուշք, պարզմուշիթ, Հօթ զրամ, նոտ զրամ, զաս զրամ:

Ասորիք, որ կոչին Քրիարտի Խորասան, յերի կայ ծովուն և աշխարհը են նորա այսորիկ. Կոշտ<sup>37</sup>, Զրկան, Ապրշահատ<sup>38</sup>, Մրուայ, Մարոստ, Հրե<sup>39</sup>, Կատ-շան<sup>40</sup>, Սղակ, Ռզակ, Անզեպատ, Պերոզիք<sup>41</sup>, Ահճիր, Գզնի, Նուզան, Վարչան, Բահզ, որ են Պարթեք, Զարմուկան<sup>42</sup>, Շերմուկան, Գողբան: Ունի լերինս և գետս, և կղզիս, Ե, և ի հեշմուկ կղզի մի հանդէպ Արեաց ի Հնդկաց ծովին, որոյ ընա-կիշքն թղկունք են Գ թղեան հասակաւ և պատերազմին հաւուցն խորդուց՝ վասն արակելոյ նոցա զերկիր նոցա:

Սկիւթայ, որք Ասպախտաւրք այսինքն Թուրքն. սկսանի սահմանք նոցա իյԱթ զետոյ մինչ ի Մօրն լեառն և ձգի մինչև ի Ճենս: Եւ Եմաւոն<sup>43</sup> լեառն բարձր և երկայն: Եւ ունի աշխարհս ԽԳ՝ Սողիկ, Թուխարիկ, Հերթախիք<sup>44</sup> և այլ խու-ժադուժ անուանք, և լերինս և գետս և դաշտս անապատս շերմայինս և անջրը-դիս: Եւ են մարդիկ երկրին հաստ անձամք, որ են ի Թուրքաստանի:

Հնդկաստան ելից կայ Նաւաց աշխարհին և յերի կայ Սկիւթայ<sup>45</sup>. և են Հըն-դիկք բաժանեալ աշխարհս, զոր բաժանէ Գեհոն գետ. և ունի արևմտից կողմն ազգս ՇԵ, իսկ արևելից<sup>46</sup> կողմն ազգ ՀԲ: Ոմանք ի նոցանէ մարդակերք, ոմանք ազնորք, ոմանք կարճահասակ տափարիթք, լայներեսք, ըսպիտակք. ոմանք մերկիմաստունք, որ գործ անիրաւութեան ոչ գործեն և զմարմինս կենդանեաց ոչ ուտեն, և երկարկեայք: Ունին լերինս և գետս և կղզիս, լինի և երևէ ամրնւնս (?), ունի որս եղչիւրքն, նա սպաննէ զառիւծն, և կորանդն և կապմայմունք, աքաղաղք<sup>47</sup> փետրամորուսք և փեղդ և վագերք և վիշապք և մեծ մրջիւնք և մրջմնառիւծք հեղք, մկունք, բղամչկայք և երկրադար գաղան, միեղչերվի, որ մեծ է քան զփիդ և ի վեր աղինն ճանք, և զփիդ լեղուաւն սպանանէ, և հաւն փասկուն և մաշկերանոյ և լիս եղչիւրայ: Լինի և ոսկի ընտիր և մարգարիտ, և ակն ամենագուհար. լինի և պղպեղ և սիւնգուեղ և ոորովի ճառք, հալուեայ, փղանգեայ մուշկ, քաֆուր, ճանդատակ, դարսենիկ:

[Տ]արարոփովն<sup>48</sup> է մեծ կղզի՝ ՌՃ մզոն երկայն, ՇԶ լայն, յերի կալով Հընդ-կաց, և ունի շուրջ զիւրե այլ կղզիս մասունս ՌՅՀ: Ունի լերինս և գետս և ազգս ԺԲ: Լինի ի նմա ոսկի և ակունս պատուական, և գաղանք՝ փիդ և վագք: Եւ արք աշխարհին վարսիւր կնոշ պսակեն զգլուխս իւրեանց:

<sup>28</sup> Ա թկլաղա <sup>29</sup> Բ զՄաղմս <sup>30</sup> Բ զԳումական <sup>31</sup> Բ զՄնդ <sup>32</sup> Ա զՍպետ  
<sup>33</sup> Ա զԱսպաստան <sup>34</sup> Ա զԱղօսն <sup>35</sup> Ա զոհարք <sup>36</sup> Ա զոհար <sup>37</sup> Ա եշտ <sup>38</sup> Ա Ապրշահայ  
<sup>39</sup> Ա Հը <sup>40</sup> Ա Իտաշատ <sup>41</sup> Ա Պրոզէ <sup>42</sup> Ա Զարմական <sup>43</sup> Բ Իմաւոն <sup>44</sup> Բ Հերթաշք  
<sup>45</sup> Ա Սկիւթեա <sup>46</sup> Բ յարևմտից <sup>47</sup> Բ խօսք աղաղակ <sup>48</sup> Ա Զարարոփովն

Ճենաստան<sup>49</sup> յերի կալով Սկութայ և մինչև յանձանօթ յերկիրն։ Եւ է ճենաստան ընդարձակ դաշտ տարածեալ, յորում բնակեալ են յաղդ ի՞ր, յորոց Ա մարդկեր է։ Ունի յերինս և զետս. և լինի նմա դարիձանիկ և կատիմոն և Հրեշմուկայ և հաւ սիրամարդ, տատ և քրքում յոլով, և ապրիշում շատ և ազնիւ, որոց արքայն կոչի ճենրակուր, որ նստի ի բաղարին Սիւփիա<sup>50</sup> և հասարակաց զգեստ երկրին կերպասեղէն է։

Իսկ անձանօթ երկիր Սինէացւոց<sup>51</sup> առ յերի կալով ճենաց, յորում են աղջ և, բայց պատմի զանցանէ անձանօթ մարդիկն և դժուարայնաւատալի, զի են, ասեն, անընդելք, մարդակերք, կիսանձունք, վիշապուանք, հաւակտուցք, կիսագանք, կիսամարդիք անզլուխք, այլաձնք, ահարկուր, անպատմելիք ի մարդկանէ։

### ԱԱՀՄԱՆՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱԲՀՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՅ<sup>52</sup>

Բարձր Հայք ունի զաւառս Թ. զԴարանադի, զԱղիճ, զԱղուր, զԵկեղեց, զՄանանշի, զԴերջան<sup>53</sup>, զՍպեր, զՇաղգամք, զԿարին։ Ունի յերինս Դ. և երէս բազումս, հաւս պիտանիս և չերմուկս և աղա<sup>54</sup>, և է բարձր քան զամենայն երկիր, քան զի ընդ Դ կողմանէ արձակէ զետս. և քաղաք է սորա Կարին, որ Թէոդուալիս կոչի։

Երկրորդ Հայք յերի կայ բարձր Հայոց, ունի զաւառս Բ. զԽորձէն, զՀաշտէնս, զՊաղնատուն, զԲալուհովիտ, զՇոփիաք<sup>55</sup>, զԽանձիթք, զԳովզէք, զԴեղիկ։ Ունի բերդ, զետս և լերինս. ունի երէս և հաւս և ձկունս, և ի զագանաց՝ զառիւծն։

Աղձնիք առ Տիգրիս<sup>56</sup> զետով կայ. զաւառս ունի Ժ. զԱրդիւն, զԱնփառներտ, զՔեղ<sup>57</sup>, զԿեթիկ, զՏատիկ, զՍալնուանս<sup>58</sup>, զԽերհնեթ, զԴեղ, զԵլուածոր, զՍասուն. և ունի նոյզ և երկաթ, զթզոր և ունի հաւ զգեհոն։

Տուրառերան<sup>59</sup> յերի կալով Զորրորդ Հայոց զաւառս ունի ԺԶ. զԽոյիթ, զԱսպակունիք, զՏարօն, զԵրշամունիք, զՄարդադի<sup>60</sup>, զՄանանադի, զԴաստնաւորք, զՏուարծատափ<sup>61</sup>, զԴղաւ<sup>62</sup>, զՀարք, զՎարժունիք, զԵրիվարք. զԲզնունեաց երկայնութեամք Ճ մզոն և լայնութեամք Կ։ Լինի ի նմա զաղակն և մեղք, նաւթ<sup>63</sup> և երկաթ, մաշկամիք և պաստակք<sup>64</sup>։

Մոգք<sup>65</sup> յելից կայ Աղձնեաց յամուր ստորոտ լերինն, զաւառք ի նմա Թ. իշայր, իշոց զաւառս, Առնենից ձոր, Միջա<sup>66</sup>, Առանձնակ<sup>67</sup> Մոզս, Արքայից զաւառս, Արգաստեացովիտ, Զերմաձոր<sup>68</sup>, ունի մրգոյ խնձոր<sup>69</sup> և մանրագոր և ընկոյզ. ի զաղանաց՝ զինձն զեղեցկախայտ, հաւ, զկարաւ<sup>70</sup>։

Կորճայք<sup>71</sup> յելից կայ Մոկաց առ Ասորեստանեաւք<sup>72</sup>, զաւառք նորա Թ. Կորդիս<sup>73</sup>, Կորդուն, Ասուանդ, Ազմոթղանս, Որսիրսն<sup>74</sup>, Կարսպասունիս, Մախուլին ելի, Փոքր Ազրակ։ Ունի զառիկ և պտուղ<sup>75</sup> աղնիւ։

Պարսկահայէն յելից կուսէ կայ Կորճայից առ Ասորպատականաւ. զաւառս ունի Թ. Աղու, Կուռինան, Մարի, Թիափիու<sup>76</sup>, Եսաոնայ<sup>77</sup>, Տամրատ, Զարհեան<sup>78</sup>, Զարուանդ, Հեր։ Ունի երէ, ցիռ և այծեամն։

<sup>49</sup> Ա Ճենաստան <sup>50</sup> Ա Կոխայ <sup>51</sup> Բ Նսինեացոց <sup>52</sup> Ա Մեծաց Հայոց <sup>53</sup> Ա զԴերջանան  
<sup>54</sup> Ա աղտս <sup>55</sup> Բ զՇոփիաթ <sup>56</sup> Բ Տիգրիս <sup>57</sup> Ա զՔիշ <sup>58</sup> զՄալնուանոս <sup>59</sup> Ա Զուրառերան  
<sup>60</sup> Ա զՄաղիւզ <sup>61</sup> Բ զՏուարծատափ <sup>62</sup> Ա զԳզաւ <sup>63</sup> Ա նօթ <sup>64</sup> Յ օզակ <sup>65</sup> Ա իոզ  
<sup>66</sup> Յ Միջակ <sup>67</sup> Յ Առանձուկ <sup>68</sup> Ա Զերաձոր <sup>69</sup> Ա չիք ունի մրգոյ խնձոր <sup>70</sup> Ա զայքաւ  
<sup>71</sup> Ա Կորճ <sup>72</sup> Յ Ասորեստանեաւք <sup>73</sup> Յ Կոդրիս <sup>74</sup> Ա Որսիրսն <sup>75</sup> Յ պտուղ <sup>76</sup> Յ Թափիու  
<sup>77</sup> Ա Եսաոնայ <sup>78</sup> Յ Զարհանդ

Վասպուրական ի մտից կոյս է՝ Պարսկացայոց յերի Կորձայից: Գաւառք ևն նորա I.9. Աշտունիք<sup>79</sup>, Տոսպ, Բղունիք<sup>80</sup>, Արշակողիդ, Բառողովիտ<sup>81</sup>, Գառնի, Սորերանի, Բուժունիք, Կղանովիտ, Հայոց ձոր, Առնիուն, Անձեացիք, Տրապատունիք<sup>82</sup>, Երուանթունիք, Մարգաստան, Արտազ, Աղբակ մեծ, Անձահից<sup>83</sup> ձոր, Թոռնաւան<sup>84</sup>, Ճուաշ, Կրանինիք, Վրձունիք<sup>85</sup>, Պալունիք, Արտաշիզան<sup>86</sup>, Արտահեան, Բարան<sup>87</sup>, Գաւաքան, Գաղրիկան, Մագտաղ, Վարժունիք, Գողթն<sup>88</sup> գինաւէտ, Նախջուան<sup>89</sup> բաղաք:

Սինիք յելից կայ Ալրարատոյ<sup>90</sup> ի մէջ Երասխայ և Արցախայ: Գաւառք ևն նորա ԺԲ. Երնչակ<sup>91</sup>, Ճահուկ, Վայոց ձոր<sup>92</sup>, Գեղարքունի, յորում է ծովն, Կոտայք, Աղահէճ, Սղուկը, Հարրանդ<sup>93</sup>, Բաղը, Զորք, Արևիք<sup>94</sup>, Կոսական: Լինի ի նմա մուրտ և գերայրի<sup>95</sup> և նուռն. և ամուրք են:

Արցախ<sup>96</sup> յերի կայ Սինեաց: Գաւառք ունի ԺԲ, զոր Աղուանք տնուանեն, զՄիւ Հիւրանդն, Վակունիք, Բերդաձոր, Մեծիրան, Մեծկոււանք, Ապիանք<sup>97</sup>, Պածկանք, Սիսականք, Կոտայքը, Քուտիփառնէս<sup>98</sup>, Կողթ, յորում լինի քարախունկն:

Փայտակարան յելից կայ Ուտիայ, առ Երասխաւ: Գաւառս ունի ԺԷ (sic) դոյր (sic) այժմ Աստրպատական ունի. Է փորակէ, Հրակարտպերուժ<sup>100</sup>, Վարդանական, Քրական, Ռութաշայ, Քաղանդուա<sup>101</sup>, Խանի Բաշ, Բաղաւան<sup>102</sup>, Ապանդարան, Որմզդան, Կաղրք: Լինի ի նմա բամբակ<sup>103</sup> անբաւ և գարի բնարոյս:

Ուտա ի մտից կայ Երասխայ ի մէջ Արցախայ և Կորւ զետոյ<sup>104</sup>, զոր Աղուանքն ունին: Գաւառքն նորա է. Առաստղոտ, Առիգոտ<sup>105</sup>, Պայեակ, Գարդմանք, Շագուշէն, Ուտի առանձուկ, յորում է՝ Պարտաւ բաղաք: Լինի ի նմա ձիթանիք և յասմիկ, և ունի հաւ՝ զկատակ:

Գուգարք ի մտից կայ Գուգարաց<sup>106</sup>, ամրոցովք իւրովք և բերդօղք (sic): Ունի գաւառս Ռ. Կող, Բերդախտ, Պարտիզափոր<sup>107</sup>, Գուրազս, Ճակատս, Արսեաց փոր: Ունի թուղ և նուռն, աղտոր և նուշ:

Ալրարատ ի միջի կայ յառաջասացելոց աշխարհացդ: Գաւառս ունի Ի. Բասեան<sup>108</sup>, Գարեղեանք<sup>109</sup>, Արեղեանք, Ապահունիք, (Աշարունիք)<sup>110</sup>, Բարիաւանտ<sup>111</sup>, Սաղկէուն, Կողովիտ, Ճակաղնէ, Սծումք, Շիրակ, Արագածուն, Մասեացուն, Նիդ, Կոտայք, Մաղազ, Վարտանիք, Աշուտս, Ուտանն Շարուը և Դիին քաղաք դոցա: Ունի լերինս զԱրագած, զԿորդուլ, զՄասիս՝ տապանական, և զետս և դաշտս սիտանիս և ամենալիս, երէս<sup>114</sup>, հաւս բաղումս աղգի աղգի և զեղեցկատես և բաղցր ի ճաշակս. և ունի զմայր եկեղեցեաց որ ի Վաղարշայատ քաղաք, որ է էջմիածինն, և զսուրք Շողակաթն:

<sup>79</sup> Ա Ռուշունիք <sup>80</sup> Ա Բղունիք <sup>81</sup> Ա Բառովողիտ <sup>82</sup> Ա Արագատունիք <sup>83</sup> Ա Անձահից  
<sup>84</sup> Ա Թոռնաւան <sup>85</sup> Ա Վրձնանիք <sup>86</sup> Ա Արտաշիզաւն <sup>87</sup> Ա Բաղան <sup>88</sup> Ա Գողդն <sup>89</sup> Ա Նախշուան <sup>90</sup> Ա Արտուր <sup>91</sup> Ա Երընջակը <sup>92</sup> Ա Վայոյ ձոր <sup>93</sup> Ա Հարրանս <sup>94</sup> Ա Արէելիք <sup>95</sup> Ա զերատի <sup>96</sup> Ա Արցախ <sup>97</sup> Ա Աղիանք <sup>98</sup> Ա Կուտայք <sup>99</sup> Ա Քութիփառնեայ <sup>100</sup> Ա Հրակարտպերուժ <sup>101</sup> Ա Ճիր Ռութաշայ, Քաղանդուա <sup>102</sup> Ա Բագուան <sup>103</sup> Ա բանզակ <sup>104</sup> Ա Ռ. Ճիր և զարի բնարոյս: Ուտա ի մտից կայ Երասխայ ի մէջ Արցախայ և Կուր զետոյ <sup>105</sup> Ա Առիգոտ <sup>106</sup> Ա Կողրակփոր <sup>107</sup> Ա Բուեզ <sup>108</sup> Ա Գուգարաց <sup>109</sup> Ա Գարտիզիփոտ <sup>110</sup> Ա Բասեան <sup>111</sup> Ա Գարրեղեանք <sup>112</sup> Ա օրինակում չկա <sup>113</sup> Ա Բաւէւանդ <sup>114</sup> Ա Երէս

## [ԱՃԽԱՐՀ ԿԻԼԻԿԻԵՑ]

Կիլիկիայի ի միջի կայ Ասորոց և Գամբրաց: Ունի գաւառս և բերդս և զետուրագումս և աղբներս<sup>115</sup>. Երէս<sup>116</sup>, զարչ<sup>117</sup> և զինձ<sup>118</sup>, եղն, պլատան<sup>119</sup>, այծեամն և մարիս վայրի, վիթ և վո<sup>120</sup> և զոմեշ և հաւ սիրամարդ և սալամ, կաքաւ և տուռէա, արաւաւ<sup>121</sup>, արագիլ, բազէ և լոր: Ունի միբզս<sup>122</sup> զինձոր<sup>123</sup> և տանձ<sup>124</sup> և սալոր և ծիրան, թրինչ և նումայ<sup>125</sup>, նարինչ և լիմաս<sup>126</sup>: Ունի երկաթ և աղ, բամբակ<sup>127</sup> և աղբիշում<sup>128</sup>, արջասպն և ծծումբ, զերմուկ և բորակ և ձիթ սեաւ և սպիտակ. և մայրաքաղաք զՅարսոն<sup>129</sup> և զՄիս, ուր է ապակէ հողն<sup>130</sup>, և զԱրս<sup>131</sup> նուահանգիստ բազում նաւաց<sup>132</sup>. լինի մուզուալայ և շապալութ, հաճար՝ Բ ցեղ<sup>133</sup>, բռուզ և զաֆրան<sup>134</sup>, վարդ և մուրտ և մանուշակ և եղչիրի<sup>135</sup> ծառ և ձիթապտուզ և աղտոր և նուշ և արմաւ և կաղին, արքայրնգոյդ<sup>136</sup>, թուզ և նուռն, սարեկ և մաննեխ, պատեխ, ձմերուկ, շամամ զեղեցկախայտ և կոթայ, սերկեի և յունասլ, կասկ և հոյն յանտառի<sup>137</sup> և Սանօպարի<sup>138</sup> փիճոյ և այլ բիւր բարիս անթուիիս:

Ա. Ա. ԱՆԱԾՅԱՆ

## ГЕОГРАФИЯ ТОВМАСА КИЛИКЕЦИ

## Р е з ю м е

На основе сличения двух рукописей, хранящихся в Матенадаране имени Маштоца, автор публикует небольшую работу по географии, которая имеет непосредственное отношение и к краткой редакции армянской «Географии» («Աշխարացու») VII века. Г. Инджичян, Г. Алишан, Б. Саркисян и другие исследователи были знакомы с этой работой Киликеци по рукописям, находящимся в Венецианском книгохранилище мхитаристов. Они установили имя автора и эпоху, в которую он жил (XIV в.), однако оригинал до сих пор не был опубликован. Недавно выяснилось, что два экземпляра этого произведения находятся в Ереванском Матенадаране имени Маштоца (рук. №№ 1518, 163а—165а, 177а, 876—906). Первые две главы публикуемой рукописи представляют географию стран Азии и исторической Армении, третья же глава целиком посвящена Киликии и содержит интересные данные о ее естественных богатствах, а также растительном и животном мире.

<sup>115</sup> Վ աղբիւրի <sup>116</sup> Վ էրէս <sup>117</sup> Վ զարչ <sup>118</sup> Ա զինձն <sup>119</sup> Ա պլատան <sup>120</sup> Վ վո <sup>121</sup> Ա արօս <sup>122</sup> Վ միբզ <sup>123</sup> Ա զինձոր <sup>124</sup> Ա տանձ <sup>125</sup> Ա նումա <sup>126</sup> Ա լիմա <sup>127</sup> Ա բանչակ <sup>128</sup> Վ աղբիշում <sup>129</sup> Ա զՅարսոն <sup>130</sup> Ա ապակէ հողն <sup>131</sup> Ա զԱրս <sup>132</sup> Վ նուռն <sup>133</sup> Ա հանար, ցեղ <sup>134</sup> Վ զաւֆրան <sup>135</sup> Վ եղչիր ծառ <sup>136</sup> Ա արքայրնկոյդ <sup>137</sup> Ա յանդառ <sup>138</sup> Ա Սինաւարի

A. H. ANASSIAN

## LA GEOGRAPHIE DE THOMAS DE CILICIE

L'auteur publie le petit ouvrage de géographie de Thomas de Cilicie apparemment lié à la rédaction abrégée de la Géographie arménienne du VII<sup>e</sup> siècle et dont le Maténadaran d'Erévan possédait deux copies récemment mises au jour (ms 1518, 163<sup>r</sup> — 165<sup>r</sup>; ms 1770, 87<sup>v</sup> — 90<sup>v</sup>).

Les philologues Gh. Indjidjian, Gh. Altishan, B. Sarkissian et d'autres eurent connaissance de cet ouvrage à la Bibliothèque de la Congrégation des Mékhitaristes de Venise. Ils en déterminèrent l'auteur et l'époque (XIV<sup>e</sup> s.).

Ce texte, publié pour la première fois, concerne les pays asiatiques, la géographie de l'Arménie historique. Le troisième chapitre est entièrement consacré à la Cilicie, la flore, la faune et les ressources naturelles de cette contrée.